

ՓՈՒՆՁ

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ շաբթու Աղթամարայ վիճակէն դարձեալ հեռագիր մը հասեր է ի Պատրիարքարան, որով ժողովրդեան տառապանքը, և կաթողիկոսական խնդրոյն ժամ յառաջ կարգադրութեան անհրաժեշտ պէտքը կճանուցանեն:

Այսպէս Սոյ վիճակէն ալ անդադար Պատրիարքարան կ'ընդունի ժողովրդեան տառապանքն ու տանձապանքը, և անհովիւ ու անառաջնորդ մնացած ըլլալն յայտնող աղիողորմ գրեր:

Այս երկու կարեւորագոյն խնդրոց վրայ մինչև ցարդ մեք բազմիցս խօսած ըլլալով այս առթիւ դարձեալ խօսիլ բոլորովին աւելորդ կհամարիմք: Պատրիարքարանը հարկաւ մենէ շատ աղէկ դիտէ՝ յիշեալ երկու ընդարձակ վիճակաց ժողովրդեան աղէտքը, ընդ որովք կհեծեն դառնապէս, և ոչ ոք է որ միւլթար ու ձեռնտու գտնուի:

Կառավարութեանց հազգին խնդիրներ լուծուեցան գացին, և այլք կլուծուին ու կկարգադրուին. բայց Աղթամարայ խնդիրը դեռ կմնայ անլոյժ. բայց Սոյ խնդրոյն համար դեռ վերջնական որոշում մը չտրուիր. պաշտօնական անձանց վրայ կճանրանայ այս պատասխանատուութիւնը, և քանի՛ մեղադրելի են անոնք, որ անտի խնդիրներ յարուցանելով այս խնդրոց կարգադրութեան յետաձգման և հետեւաբար բերաւոր ժողովրդեան թշուառութեան պատճառ կըլլան:

Իզմիրի ազգայինք հարկաւ յանհամբերս կմպասեն Պատրիարքարանի տնօրինութեան, և հարկաւ կուզեն դիտնալ թէ Պատրիարքարանը ինչ կզգայ իզմիրի մէջ հետզհետէ անցած ցաւալի անցից վրայ:

Մեք կապահովեմք զիրենք, թէ Պատրիարքարանը ազգային խնդրոց գրեթէ առաջինն բրած է իզմիրի խնդիրը, և կը փափաքի ժամ յառաջ խաղաղութիւնն ու օրինաւորութիւնը վերահաստատել:

Քաղաքական ժողովն անցեալ ուրբաթ առուր նստին մէջ որոշեց՝ երկրորդ անգամ գրել և խնդրել Բ. Դրնէն, որ հըրամանագիր ուղղուի առ կուսակալութիւնն իզմիրի, գաւառական ազգային ժողովոյ նիստերն անարգել ընել տալու, և առաջնորդարանէն յափշտակեալ ազգային տոմարներն ու արձանագրութիւններն Սպարթալեան էֆէնտիի վաճառատունէն առաջնորդարան վերադարձուներու, և նաև՝ ազգային պաշտօն չունեցող ազգայինները ազգային գործոց միջամուկս ըլլալէ զգուշացներու համար:

Մեք կյուսամք, թէ քիչ օրէն Բ. Դրնէն:

նէն կենէ այս կարեւոր հրամանագիրը: Կլեմք, թէ արդէն Բ. Դրնէն հեռագրով տեղեկութիւն ուզեր է կուսակալութենէն՝ տեղւոյն ազգային անցից վրայ:

Պատ. ֆոխանորդ գեր. Հայրն երկու շաբթի երեկոյ խասգիւղ առ ամեն. Ս. Պատրիարք Հայրն տարաւ՝ ազգային ընդժողովոյ մայր դիւանի երկրորդ դիրք, որով, ինչպէս յայտնի է՝ Նորին բարձր Սրբազնութեան հրատարականին ազգային ժողովէն դարձեալ չընդունուած ըլլալը կճանուցուի, միանգամայն խնդրելով որ խառն ժողովոյ հետ խորհրդակցութեամբ պարտուպատշաճ տնօրինութիւնն ընէ ազգային գործոց ու խնդրոց կարգադրութեան համար:

Ակնունիմք, թէ Ս. Հայրն վերջապէս կզիջանի հրատարականը ետ առնուլ՝ չկընալով մերժել այսքան թախանձանք. և եթէ օգտակար կը համարի՝ առժամանակեայ տեղապահ կամ խորհրդականի մը ընտրութիւն կըլլայ անյապաղ. սակայն մեզի հետ շատերը կցանկան որ ազգային գործերն դարձեալ ուղղակի իւր միջոցաւ տեսնուին, և տեղապահ կամ խորհրդականի ընտրութեան խնդիր մ'ալ երեւան չենէ:

Զվիցերիէն:

Շաբաթից 4-ը, որ օր 4-ը ևս գործնէ, Բառայան օրէնքի Խորհրդի և Օրպանի միջոցով:

Նահապետական կառավարութիւնը յարմար չտեսնելով և մէջ տեղէն վերուցինք. ամիրայական իշխանութիւնը Բառայան և օրպանի միջոցով համարեցինք և վզերնէս նորա լուծը թօթուեցինք. մենք լաւ, ազատամիտ ազգային կառավարութիւն, ազգային իշխանութիւն, ազգային օրէնք, հասարակաց կամ ժողովրդական վարչութիւն կուզենք, ըսինք, պօռացինք, դուռացինք և վերջապէս օր օր համարաբար ձեռք բերինք անցուցինք, և տան և հինգ տարի է, որ (այդ) մեր ձեռքն է. դորանով ունեցանք ժողովրդական իրաւունք, դորանով կազմեցինք ժողովրդական ժողովներ և վարչութիւնք. սակայն մինչ ցարդ ցուցուցինք, որ մենք ևս մի առանձին ազգ ենք, մենք ևս կը ճանաչենք մեր ազգութիւնը ինչպէս օտար ազգեր. հաւատա՞նք և պարծենա՞նք որ այդ ժողովները, վարչութիւնք մեր ազգութիւնը կը ցուցնեն, քանի որ դժբա տաւրն և հինգ տարի է ի վեր միայն կը խօսին, կը ճառեն, կը վիճին և կը դրեն:

Պօլսեցիք, գաւառացիք, խնդրեմ, ասացէք, թէ ինչ է ձեր տարբերութիւնը արդի և անցեալ վարչական ժողովոց օրերուն նայելով. միթէ վանք, Մուշը,

Տիգրանակերտը և բոլոր հայաբնակ քաղաքները և գիւղերը և նոյն ինքն Պօլս անցեալէն մազի չափ յառաջ եկած են. միթէ ինչ որ էր գաւառացին այն ժամանակ, այսօր ալ մի և նոյնը չէ, և ալ աւելի վատ չէ. միթէ ինչ որ էին մեր վանքերը, մեր ուսումնարանները, մեր վարժապետները, այսօր ալ մի և նոյնը չեն և ալ աւելի վատ չեն. եթէ անցելոյն մէջ մի արդիւնք ալ որ չտեսնուէր, գոնէ համեստութիւնը, պարկեշտութիւնը և ամօթխածութիւնը, Աստուծոյ երկիւղը և մարդոց ամօթը կարայսօր ինչ կը տեսնենք մեր վանքերուն և մեր դպրոցներուն մէջ: Միթէ ինչ որ էին երկրագործք, արհեստաւորք և վաճառականք, այսօր ալ մի և նոյնը չեն և ալ աւելի վատ չեն. ո՞ր են մեր ժողովրդական դպրոցները, մեր կիրթ, ազատամիտ և հայրենասէր մանկավարժները, որոնք փոխանակ օր օր արհեստագործ և իրենց գնացքը, ջանքը և աշխատութիւնը բոլոր այս ուղղութեամբ, այն խեղճ տղայոց ազգի, ընկերի, հայրենիքի և Աստուծոյ սէրը քարոզեն ազատ և բացարձակ. ո՞ր են մեր վանքերը, որոնք իրենց բարի օրինակով, բարոյականութեամբ և դպրոցներով ու մամուլներով ազգին լոյս տան և ժողովրդի իւր եկեղեցւոյն և կրօնին մէջ հաստատ պահեն. ո՞ր են մեր կիրթ և ժողովրդական վարժապետները, որոնք եկեղեցւոյ ամպիոններէն աւետարանի հեղ, ողորմած ոգին քարոզեն, եզրայրութիւն, հաւասարութիւն և ազատութիւն քարոզեն, խաչ և աւետարանի ձեռնին ժողովրդեան մէջ սիրոյ, խաղաղութեան և միութեան սերմերը ցանեն, փոխանակ եղածն ալ ջնջելու և իսպառ ջնջելու: Ո՞ր են մեր հայրենասէր և ժողովրդասէր լրագիրները, որոնք իրենց էջերը փոխանակ մամուլնոր նամակներով, ունայն վիճաբանութիւններով լրացնելու, ժողովրդեան յառաջադիմութեան քաղաքացիութեան և ազնուութեան դասեր տան և յորդորներ կարգան. վերջապէս ո՞ր է մեր ազգային սնտուկը, որուն մէջ ոսկի լինի և դորանով ազգային գործեր հոգացուին, ժողովրդական կեդրոնական դպրոցներ հաստատուին, վարժապետանոցներ և վարժապետանոցներ հաստատուին, որբանոցներ, հիւրանոցներ շինուին. բայց ինչ կըսեմ, միթէ մենք ազգային տուրք ունինք, որ ազգային սնտուկ ալ ունենանք և ազգային գործեր նայուին: Այս է մեր ազգութիւնը, մեր սէրը և ձգտումը դէպ ի ազատ վարչութիւն, ազատ կառավարութիւն և ի յառաջադիմութիւն: . . . Ո՛չ, ո՛չ. այս չպէտք է լինի մեր ձգտումը, այս մեր ազգայնու-

Թիւնը չցուցնէր . ազգայնութեան մէջ ազգութիւնը պէտք է գործէ , շարժումը պէտք է ազգային լինի . մեռած է այն ազգը , որոյ հասարակաց կեանքը ակարէ , անգործ է , որուն մէջ գործողը չէ՛ թէ հասարակութիւնն է այլ եւ ուրիշ : Մեր անցեալը այսպէս տխուր էր . գործել կուզէինք , և չէին թողուր . շարժել կուզէինք , և մեզ կը հարուածէին . խօսիլ կուզէինք , և բերաններնուս կը զարնէին . և իրաւ , անցելոյն մէջ աւելի կենդանի , աւելի շարժուն , աւելի զգայուն էինք , որով և մեր վիճակէն դժգոհ լինելով , զայն փոխեցինք , ժողովրդական օրէնք հաստատեցինք , և ուխտեցինք , որ մենք ևս փոքր բայց ազատ Զուլիցերիոյ , Գաղղիոյ և Գերմանիոյ նման շարժենք , խօսինք : Գաղղիոյ և Գերմանիոյ նման շարժինք , խօսինք , գրենք , ապրինք և գործենք , որպէս զի մենք ևս նոցա պէս երջանիկ լինինք , հասարակաց կեանք ունենանք , ժողովրդական և ազգային շարժումներ ունենանք , դպրոցներ ունենանք , մանկավարժներ ունենանք , հովիւներ ունենանք և այսպէս մեր ազգութիւնը ցուցնենք . բայց այս ինչ անտարբերութիւն է որ ո՛ւր որ էինք այն տեղ ալ չէինք , և միշտ ժամանակ չէ , որ մի քիչ ևս գործենք , քառասուն տարեկան իրաւունքն և մեր ազգութիւնը ցուցնենք :

75 Հով. 19 Պաղէլ Տաճար Գ. Պէյլերեան

Կարինէն առ մեզ զրկուած են հետեւեալ երկու կարեւոր տեղեկագիրք , որք տեղւոյն գաւառական ընդհանուր ժողովին մատուցուել են , և որոց մին՝ վանական կալուածոց սեպհականութեան խնդրոյն կվերաբերի և խորին ուշադրութեան արժանի է . իսկ միւսը՝ գաւառները զրկուած սահմանադրական հրահանգին վրայ ինչ ինչ դիտողութիւններ կապուունակէ :

Ա.

« Գերապատիւ Սրբազան Նախագահ՝ ընդհանուր ժողովոյն կարնոյ :

Քաղաքիս Քաղաքական ժողովէն առ ընդհանուր ժողովը մատուցեալ մէկ տեղեկագրին միջոցաւ քաղաքիս վանօրէից հողային խնդրոյն վերաբերեալ մասը ժողովը ուշադրութեան առնելով՝ մասնաժողովոյս՝ տեղեկագրութեան յանձնած էր :

Մասնաժողովս մէկ երկու նիստի մէջ քաղաքիս վանօրէից հողային խնդիրն ուշի ուշով քննութեան առաւ , խնդրոյն ամեն կողմերուն ուշադրութիւն ընծայեց , և գտաւ որ՝ ո՛րչափ որ վիճակիս երեք վանօրէից հողերն գարաւոր հնութեամբ յիշեալ վանօրէից և ազգին սեփականութիւնն են , այսու ամենայնիւ տիրող կառավարութեան այժմեան օրինաց և ո՛չ մէկ յօդուածոյն տրամադրութեամբ կրնայ հաստատուիլ այս ազգային իրաւունքը . թէպէտ և որոշ կերպով չգիտեմք ալ թէ մեր վանքերու հողերը ժամանակ յառաջ Օսմանեան նախորդ կայսերաց կողմանէ առանձնաշնորհեալ հրովարտակներ ունեցած են թէ ոչ . դուցէ ունեցած են , ու ժամանակին քաղաքէս եղած գաղթականութեան ատեն ուրիշ շատ պիտանի գրեւոր հետ կորսուած են , որոյ ստուգութիւնը Պօլիս արքունական Տեղեկութեանէ

արձանագրութիւններէն միայն կրնայ իմացուիլ :

Վիճակիս երեք վանօրէից հողերը ցայսօր նոյն վանօրէից տեսչութեանց կողմանէ վար ու ցան ըլլալով , կառավարութեան հողային օրինաց մէկ յօդուածոյն տրամադրութեամբ , նոյն վանօրէիցը կը համարուին . սակայն այս ալ բացարձակ փաստ և սեպհականութեան իրաւունք մը չկրնար ըլլալ , քանզի նոյն հողերը այսօր վանօրէից այս տեսուչը վաղն ալ ուրիշ տեսուչ մը կը վարէ ու կը ցանէ . օրինաց տրամադրութեան հետ բաղդատելով այս ընթացքը , մեր վանօրէից հողերն այսօր վանօրէից այս տեսչին վաղն ալ ուրիշ տեսչի մը սեփականութիւնն կրնան համարուիլ . այս խարխուլ իրաւանց շարունակութիւնը թէ ո՛րչափ վնասակար է , պատկառելի ժողովոյդ իմաստութեանը կթողումք քննել :

Ինչպէս վերը ըսինք՝ վանօրէից հողերն տէրութեան քաղաքական օրինաց համաձայնեցնելով վանօրէից սեպհականելու գործը դժուար է . քանզի հողերը մարդոցմէ զատ ուրիշ հաստատութեանց և նուիրական տեղեաց չեն կրնար սեպհականուիլ , եթէ առանձնաշնորհեալ կայսերական հրովարտակ չունենայ . կառավարութեան օրէնքը կպահանջէ որ հողերը իրենց կենդանի սեպհականողներուն մահուանէն զինի , անոնց որդւոց կամ մերձակայ ազգականաց վրայ ինչպէս ըլլայ . այս պահանջումը անխափան է և բացառութիւն չունի . եթէ օրինաց տրամադրութեան հետեւելով վանօրէից հողերը արժանահաւատ ազգայնոց վրայ ըստ օրինի խօսք ըլլայ , ժամանակին փոփոխութիւնն , նոյն արժանահաւատ անձանց մահուանէ զինի երեւան եկած վտանգներն միտք բերելով , հետեւանքն վնասակար է ամենայնիւ :

Այս ամենուն հետ Մասնաժողովս ուշադրութեան առնուլ կամեցաւ նաև քաղաքիս նախորդ վարչութեանց և ազգային Պատրիարքարանի մէջ այս մասին փոխանակուած բանակցութիւնները , և գտաւ որ խնդիրը ամենայն մանրամասնութեամբ տեղեկագրուած է ժամանակ ժամանակ ազգային Պատրիարքարան , և որոց՝ Պատրիարքարանի կողմանէ տրուած պատասխանն եղած է :

Ա. Հանգուցեալ Պօղոս Ս. պատրիարք հրամանադրած է վանօրէից հողային խնդիրը կառավարութեան օրինօք լուծել :

Բ. Խորմեան սրբազան հրամանադրած է վանօրէից հողերն իրենց նուիրական անուան վրայ խօսք ընել տալ :

Խորմեան սրբազանի սոյն հրամանագրին հետեւիլ կպահանջէ նաև կեդր. վարչ. վանօրէից խորհուրդը :

Հանգուցեալ Պօղոս Ս. պատրիարքի հրամանագիրը վերը ցոյց տրուած պատճառներով իր ոյժը կորսնցուցած է և անգործագրելի :

Խորմեան Սրբազանի հրամանագիրը կը պահանջէ հետեւիլ խաբէութեան և վանօրէից հողերը նուիրական ըսուած վերացեալ անուան վրայ խօսք ընել . նուիրական անունը ի հարկէ իբրև կենդանի մարդոց անուն ցոյց տալ պէտք է կառավարութեան , և անոր վրայ հողերը խօսք ընել տալ : այս հրամանին հետեւի-

լը բոլորովին անհիմն է և անհաստատ , քանզի նուիրական անունը մէկ կողմէն վերացական միւս կողմէն խաբէական ըլլալովն հանդերձ , ո՛չ մահ ունի և ո՛չ ժառանգ , հետեւաբար տէրութեան պահանջած ինչպէս գործողութեան բոլորովին հակառակ . մանաւանդ որ վանօրէից հողերը նուիրական ըսուած անուանց վրայ կանխապէս կառավարութեան արձանագրութեանց մէջ խօսք պէտք է ունեցած ըլլայ՝ որ չկայ . երկրորդ՝ իւրաքանչիւր վանք ո՛ր գիւղի սահմանի մէջ որ է , նոյն գիւղի խօսք խօսք գրաւոր ինչպէս պէտք է կառավարութեան տան , որ ըստ այնմ խօսք ըլլայ . վանօրէից սահմանակից գիւղերու խօսք խօսք գրաւոր գրեթէ ամենն ալ տաճիկ են . արդ ո՛ր խօսք խօսք վանուց հողերը փոխանակ վանքին են ըսելու , վանուց նուիրական անուան , այսինքն Մարեմայ , Յովսէփայ , Գրիգորի և Ն. սեպհական են ըսելով գրաւոր ինչպէս կրնան տալ կառավարութեան . եթէ կառավարութիւնը ըստ գիւղաց միանգամ և եթէ ուղէ տեսնել այդ Գրիգոր , Յովսէփ , Մարիամ ըսուած անձինքը , ո՛վ պիտի համարձակի ըսելու թէ մենք ենք :

Վանօրէից հողային խնդիրը նոյն վանօրէից սեպհական եղած ըլլալու կէտ մը միայն կայ , զոր Մասնաժողովս պարակահամարի յիշել . կառավարութեան արդի քաղաքական օրինաց հրատարակութեան առաջ Օսմանեան նախորդ կայսերաց օրով ժամանակին մեր հանգուցեալ պատրիարքաց , առաջնորդաց և վանահարց ձեռք տրուած արքունական հին հրովարտակներ կան , որոց մէջ հանգուցեալ կայսերք ազգային վանօրէից արտերն , ագարակները , նոյն վանօրէից սեպհական ըլլալը ճանչնալով անոնց վար ու ցանին և տիրապետութեան համար դրսէ դուրս անձանց միջամտութիւնը բացէ ի բաց արգիլած են , և միայն վանահարց , առաջնորդաց յանձնած են վանօրէից ագարակ ու արտերը վար ու ցան ընելն . արքունական հին հրովարտակաց մէջ գտնուած այս ամենակարեւոր իրաւունքները ցաւօք սրտի Մասնաժողովս կտեսնէ որ ներկայ պատրիարքաց , առաջնորդաց և վանահարց հրովարտակներու մէջէն դուրս ձգուած են . չգիտցուի ալ թէ սոյն ամենակարեւոր իրաւանց կորստեան վրայ հոգացողներ եղած են թէ ոչ :

Ի վերայ այս ամենայնի , ուրիշ ընելիք մը չկար , այլ ըստ կարծեաց Մասնաժողովոյս սոյն հողային խնդիրը ամենայն մանրամասնութեամբ մեր Օգոստոսի առ կայսեր գիծոյն և հայրախնամ կառնկցութեան ներկայացնելու կարօտ է : Եթէ ազգային Պատրիարքարանի խնդրոյ պատկառելի ժողովոյդ Օգոստոս կայսեր խնդրամատոյց ըլլալով չըսենք միայն մեր վանօրէից հողերուն համար , այլ ընդհանուր ազգային վանօրէից հողերուն համար խնդրէ Նորին կայսերական վեհափառութեան , որ Օսմանեան նախկին կայսերաց հին հրովարտակաց մէջ տեսնուած նոյն արտօնութեամբ ազգային վանօրէից հողերը իւրաքանչիւր վանօրէից վրայ սեպհական ճանչնալու յատուկ հրովարտակ չնորհէ . այս շնորհումը ար-

դէն եղած է Օսմ: հանդուցեալ կայսերաց կողմանէ Յունաստանի շատ մը վանորէից: եթէ այս ալ չէ՛ գոնէ հրովարտակ արուի որպէս զի բոլոր վանորէից հարկերը իրենց մնայուն վանահարց կամ առաջնորդաց վրայ թափու ըլլայ, սա պայմանաւ որ նոցա բերքը վանորէից միաբանութեանց յատկացուի, և ի վախճանել վանահօր կամ առաջնորդին, ըստ օրինի թիւիսէն գործողութիւնը կատարուի յաջորդ վանահօր կամ առաջնորդին վերայ դարձեալ թափու ըլլալով, և այսպէս շարունակաբար: Կառավարութեան էօշնօն տուրքէն ալ որ և է վանք ազատ ըլլայ:

Ահա այս է Մասնաժողովոյս ազգային վանորէից հողային խնդրոյն նկատմամբ ունեցած խորհրդածութեան արդիւնքը, զոր տեղեկագրելով պատկառելի ժողովոյդ ի գիտութիւն:

Մնամք անձնուէր աղբիս
17 հոկտ. 1875 կարին (Սորոսթրոմիսն+)
Բ.

Գերապատիւ Սրբազան նախագահ Ազգ. ընդհանուր ժողովոյն կարնոյ:

Կեդրոնական վարչութեան կողմանէ պատրաստուած սահմանադրական հրահանգաց գործադրութեան մէջ վերելած դժուարութեանց և անգործադրելի նրկատեալ մասանց վրայ՝ ըստ ծանուցման նախորդ կեդրոնական վարչութեան դիտողութիւնք պատրաստելու գործը պատկառելի ժողովդ մասնաժողովոյս յանձնարարած էր ի տեղեկագրութիւն:

Մասնաժողովս մէկ երկու նստի մէջ յիշեալ սահմանադրական հրահանգները ուշադրութեան առնելով, նոցա մէջ գաւառային վարչութեանց մէկ երկու մասերը գործնական փորձառութեամբ անգործադրելի գտած է, որք են:

Ա. Սահմանադրական հրահանգը գաւառային վարչութեան կրօնական և քաղաքական ժողովոց անդամոց երկամեայ պաշտօնավարութեան զինի, զանոնք կը դադարեցնէ վերընտրելի չըլլալու պայմանաւ: Այս պայմանը թողունք որ անարդար է, քանզի ազգային պաշտօնեայ մը որ խղճի մտօք և անձնուիրաբար իր ազգային պաշտօնի շրջանը լրացուցած է, որ օրէնք կարգելէ զայնպիսին վերընտրելի ընել. թողով զայդ, գաւառային վարչութեանց վերընտրելի չըլլալու դրութիւնը մեծամեծ անհնարութիւններ ունի: Բ. Բնորոշութիւնը և յայտնի իսկ է որ գաւառի մը մէջ մանաւանդ ուր այնչափ բազմաթիւ չեն հայք, քաղաքական և կրօնական ժողովոց համար սահմանադրութեան պահանջած հանգամանքներն ու արժանիքն ունեցող և ազգին ձրի ծառայելու տրամադիր անձինք շատ հազուադէրս են: օրինաց տրամադրութեան հետեւելով հարկ կլինի այնպիսի անձինք ազգային պաշտօնի կոչել, որ ամենայնիւ զուրկ են օրինաց պահանջած յատկութիւններէն: Ուստի ըստ կարծեաց մասնաժողովոյս պէտք է որ գաւառային վարչութեանց անդամոց վերընտրելի չըլլալու օրինական արդեւրք վերցուելով անբասիր և արժանաւոր անձինք վերընտրելի ըլլան:

Բ. Գաւառային վարչութեան քաղաքական ժողովոյ իրաւասութեան ենթար-

կեալ տեսուչ խորհրդոց թիւը վարչական գործառնութեանց և պաշտօնավարութեան մէջ միշտ անհամաձայնութեան, գժտութեանց և փրատուց պատճառ եղած է, և միով բանիւ գաւառներու մէջ տեսուչ խորհրդոց պաշտօնը անուանական և ապարդիւն եղած է ցայսօր, որոյ պատճառը՝ ըստ կարծեաց և ըստ փորձառութեան մասնաժողովոյս տեսուչ խորհրդոց շատութիւնը, միւս ազգային ժողովոց և խորհրդոց հետ ունեցած առընչական յարաբերութիւնը եղած է, և ինչ հարկ գաւառաց մէջ շատցնել այսչափ ժողով և տեսուչ խորհուրդներ մինչդեռ գործ չկայ, և այս անգործութեան կողմանէ մէկզմէկու դէմ կռուոյ կելլեն, մինչև իսկ գաւառին խաղաղութիւնը վրդովելու առիթ կըլլան:

Ուստի ըստ կարծեաց մասնաժողովոյս՝ գաւառները փոխանակ տնտեսական, ուսումնական և հողաբարձութիւն անուանեալ խորհրդոց, լաւ է որ տեսուչ խորհուրդ մը միայն ունենայ՝ ընտրեալ վիճակին գաւառական ընդհանուր ժողովէն և այս երեք խորհրդոց պաշտօնը լիազօր իշխանութեամբ կատարէ պատասխանատու մնալով զինքն ընտրող ընդհանուր ժողովոյն:

Մասնաժողովս սահմանադրական հրահանգաց միայն վարչական մասին մէջ այս երկու անգործադրելի կէտերը պատկառելի ժողովոյդ ուշադրութեան ներկայացնելէն զինի՝ ուրիշ կարևոր կէտի մը վրայ ալ իր դիտողութիւնը հարկ կը համարի յաւելուլ:

Սահմանադրական հրահանգը իւրաքանչիւր գաւառաց համար դիւանատուն, դիւան և գափու քէհեստի մը ունենալ կարգանջէ, որ շատ կարեւոր է մանաւանդ կեդրոն (վիլայէթ) եղող քաղաքաց համար, որովհետև շրջակայ բոլոր հայաբնակ քաղաքաց ազգայնոց գործերը կառավարութեան վիլայէթի օրինաց համաձայն գաւառագրութիւնը տեսուրի հարկ ըլլալով, գաւառագրութիւն մէջ ազգային դիւանատուն և գափու քէհեստի անհրաժեշտ հարկաւոր է: Բայց այս ալ ըստական մեծ ծախուց կկարօտի: արդ խնդիրը այս ծախուց վրայ է թէ գաւառագրութի ազգային սնտուկը միայն տալու է այս ծախքերը թէ շրջակայ գաւառայինք ալ մասնակցելու են այս ծախուց: Ուստի մասնաժողովս կառաջարկէ որ պատկառելի ժողովդ ազգային դիւանատան համար սահմանուելիք ծախուց չափը սահմանելով բարեհաճի ծանուցանել կեդրոնին, որպէս զի կարնոյ շրջակայ գաւառաց ազգայնոց վրայ բաշխելով զայն հրամանագրէ իւրաքանչիւր գաւառի վարչութեանց որ որոշեալ իրենց բաժին ինկած դիւանական ծախքն անխափան հատուցանեն կարնոյ ազգային վարչութեան: Չայս ևս պատկառելի ժողովոյդ իմաստուն տնօրէնութեան յանձնելով:

Մնամք և ըն.
23 հոկտ. 1875 (Սորոսթրոմիսն+)
կարին

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ
Ձինուորական գործոց նախարար կարգեցաւ՝ ծովային գործոց նախարար Նամըզ փաշա:

— Երովային գործոց նախարար անուանեցաւ՝ զինուորական գործոց նախորդ նախարար Բիզա փաշա:

— Բրէզըլինի կառավարիչ կարգեցաւ՝ Յիլիպէի նախկին կառավարիչ Վէյսի փաշա:

— Տէպրէի կառավարիչ անուանեցաւ՝ Մուսուլի նախորդ կառավարիչ Ապաի էֆէնտի:

— Երրորդ աստիճանի պաշտօնատարութիւն տրուեցաւ՝ Թրիպօլիի Միւտիր Էտհէմ էֆէնտի:

— Պրուսայի նորընտիր կուսակալ Ղալիպ պէյ՝ երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ:

— Փեամիլ փաշայի տիկինը անցեալ շաբաթ օր կոչունք տուաւ դեսպանահաց ոմանց:

— Յազիլ Մուսթաֆա փաշա սկսեր է առողջանալ:

— Սերվէր փաշա որոշեր է՝ սլավերէնի թարգմանել տալ կայսերական օրինագիրքը (տէսթուր), ի տեղեկութիւն սլավ ժողովրդեան Պօսնայի և Հէրսէքի:

— Քանի մ'օր յառաջ մեւեր է նէշաթ պէյ՝ որ ուրիշ պաշտօններէ զատ Սուլթան Ապաիւլ Մէհիտի առաջին սենեկապետութեան պաշտօնն ալ վարած է:

— Արտաքին գործոց նախարար Բաշիտ փաշա, փարիզի նախորդ դեսպան Ալի փաշա, և Թըրքոյի նախորդ կառավարիչ Յէյրի պէյ՝ կիւրակէ օրը մայրաքաղաքս հասան:

Պուքրէյէն գրուածին նայելով՝ այս տարի ձմեռն կանուխ հասնելով շատ ձիւն եկեր, և ամառուան հանդերձներով կըրթութեան պարապող զօրքը մեծ նեղութիւն կրեր և ոմանք հիւանդացեր են: Այս պատճառաւ, նոցա ձիւրուն մէկ մասն ալ կոտորեր են, և հետեւաբար հրաման եղեր է գառնալ զօրանոցները:

— Նախորդ ամսոյն Ձիւն, Սադըղի մէջ գետնին տակէն հանելի ձայներ լսուեր և անմիջապէս ուժդին շարժ մ'եղեր է: Բնակիչք սարսափեր են կարծելով թէ երկիրը պիտի պատառի: Բայց քանի մը հին պատեր միայն փլեր են. շարժը հետզհետէ երեք գիշեր ալ տեղի ունեցեր է, բայց դարձեալ առանց վընասու:

— Թարապիս Ազուր անուն անձի մը որդին երկու օր յառաջ քանի մը ընկերաց հետ զբօսարանի մը մէջ ուտել խըմելէն յետոյ, զանոնք առեր այդին տարեր, և խօսակցութեան ատեն յանկարծ « Ես հիմա կուգամ » ըսելով, զանոնք թողեր, և այդին մէկ անկիւնը ծառի մը տակ բերնին ատրճանակ մը պարպելով՝ ինկեր հօգին փչեր է:

Պօսնայի կուսակալութեան, և նոյն կողմը գտնուող Օդոստափառ Սուլթանին գլխաւոր թիկնապահ Խալիլ փաշայի կողմանէ կասքայէն հետեւեալ իմաստով հեռագրեր հասեր են Բ. Գուռը:

« Լուր գալով թէ բազմաթիւ ապրտամբք կժողովին, Շէվքէթ փաշայի հրամանատարութեամբ 10 գունդ զօրք Բիվա կլասուիթ ըսուած տեղը խաղացին, և հետեւեալ օրը՝ հոկտ. 29 ին՝ անկէց ելնելով, ժամ մը անդին տեսնուեցան 10 հազարէն աւելի բնիկ և գարա-

տաղցի ապստամբք, որոնք զետեղուած էին դժուարին ու ապառաժուտ տեղուանք: Զօրքը ասոնց հետ կուռի բըռնուեցաւ ցերեկուան ժամը 7 էն մինչև գիշերուան մէկը, և ապստամբք վերջապէս չկրնայով դիմակալել ջիւր ուցան եղան, և զօրքը կարևոր տեղերը գրաւեց: Ապստամբք գիշերը լերանց ու անտառաց մէջ կրակ վառելով, մինչև առաւօտ մեռեալները վերցուցին, և միւս կողմանէ օգնութիւն գտնելու համար նշաններ ու շարժումներ ընելով հետեւեալ օրը դարձեալ պատերազմելու պատրաստուեցան մաս մաս բաժնուելով, և անմատոյց տեղեր ամրանալով: Կուռն սկսաւ, մինչև ժամը 12 տեւեց, և այս երկրորդ անգամ ալ յաղթող հանդիսանալով զօրքը թնդանօթներ արձակեցան և ուրախութեան հանդէս կատարեցաւ: Ապստամբք գիշերը վերուցած մեռեալներէն զատ՝ 450 էն աւելի մեռեալ թողած են, և ընդհակառակն զօրաց կողմանէ եղած կորուստը շատ քիչ է բաղդատմամբ նոցա կորստեան առաւելութեան հետ»:

Նախորդ ամսոյն 30 ին գիշերը փարիզ նմանը չտեսնուած ուժեղութեամբ փոթորիկ մը պատահելով մէկ և երկու հարիւր տարուան ծառեր արմատաքի խլեր, և շատ տուններու պատեր փլուցեր է:

— Սպանիոյ Տօն-Գարլոս ձիէն կյնալով քիչ մը տկարացեր է: Այս օրերս այսպէս քանի մ'երեւելի անձինք՝ ձիէ ինկած են:

— Յունաստանի դատաստանական դործոց և հասարակաց կրթութեան նախորդ նախարարք՝ կաշառակերութեան ամբաստանութեամբ հարցաքննութեան ենթարկուելու ու բանտարկուելու են:

— Այս անգամ՝ վէրսայլ գումարեալ ազգային ժողովը 733 անգամ ունի, և վախճանման պատճառաւ միայն 26 աթոռ թափուր մնացեր են:

— Գերմանիոյ վաճառական նաւուց թիւը՝ 253 շոգեհաւուց հետ՝ 4490 ի կը հասնի, յորս 41 հազար 396 նաւապետք և նաւաստիք կգտնուին:

— Անգղիոյ հասարակաց խորհրդարանի բացման օրէն օր մը յառաջ, ըստ դարաւոր սովորութեան՝ երեկոյին զինեալ մարդիկ և գունդ մը պահեստի զօրք լապտեր ի ձեռին քննութեան կեննեն խորհրդարանին շրջակայքը:

Այս արարողութիւնը 270 տարիէ հետէ անխափան կը շարունակուի. 1605 ին նոյեմ. 4 ին խումբ մը ստահակք միացեր են վառօդով օդը հանել խորհրդարանը. և ահա մինչև ցարդ յիշեալ խուզարկութիւնը կըլլայ, իմանալու համար թէ այնպիսի դարան մը կայ . . . :

— Անգղիացուց չափազանց պաղարիւն ըլլալը կհաստատէ հետեւեալ դէպքը:

Անգղիացի աղնուական մը շոգեհաւուքի մը մէջ կգտնուի, որ քանի մ'օր յառաջ վտանգի հանդիպելով շատ մարդոց կորստեան ու վիրաւորուելուն պատճառեղեր է. աղնուականին կծանուցուի թէ իւր սպասաւորն ալ երկու կտոր եղած է. նա՛ քիչ մը խորհելէ յետոյ՝ «Արդեօք, կըսէ, մեր պայուսակին բանալին ո՛ր կըտորին մէջն է, կրնա՞ք գտնել» . . . :

— Փարիզ քաղաքի փոխառութեան

200 հազար ֆրանկ շահող առաջին պարգեւն՝ քաղաքին մէկ կարկանդակործին վիճակեր է:

ՅՐԱՆԱԸՉ ԹԷԱԹՐՈՍՈՒ
ՕՄՄԱՆԼԸ ՍԲԷՐԱ ԳՕՄԲԱՆԻԱՍԸ
Տ. Չոբոմեան և Տ. Գալեմեան և շէքեթեան
Խորհրդակցութիւն
1875 Նոյ. 12 ջարդամպա Խաչամբ սաար 3տե
ԼԵՊԼԷՊԻՃԻ
ՀՕՐՀՕՐ ԱՂԱ
Օրէրա գօմիք իւշ ֆաթըլ
ԿԻՒՅԹԷ Թ. ՆԱԼԵԱՆ
ՊԷՍԹԷ Տ. ՉՈՒԻԱՃԵԱՆ

Գրատուն Աստուրեան, Ղաւթիոյ Աշտարակի
Ներսէ Հիւրէի փողոց Բէ-13

Պ. Ա. Աստուրեան պատիւ ունի ծանուցանել հասարակութեան թէ իւր գըրատան մէջ կը ծախուին, անգղիարէն ամեն տեսակ օգտակար գասագրքեր, ուսումնական գրեանք, գպրոցաց համար հարկաւոր եղած որ և է նիւթ, և մանաւանդ իւր եղբօրը, հանդուցեալ Տոբթօր Ա. Աստուրեանի հեղինակած Հայ-Անգղիարէն Քերականութիւնը, չափաւոր գնով: Ուզողը կրնայ գիմել Ղաւթիոյ Աշտարակին ներքև Հէնտէք փողոց թիւ 13:

Յակոբ Էֆէնտի Նազըբեան՝ որ անցեալները փաստաբանութեան վկայագիր ստացաւ Բ. Գուռը յատկապէս կարգեալ քննիչ մասնաժողովէն, այս օրերս իւր գրասենեակը փոխադրած է Պօլիս Պաղչէ գափու Շէյխ-Իւլ-Իսլամ խանի վերի յարկ թիւ 5:

Անտարակոյս եմք, թէ Նազըբեան Էֆէնտի՝ որ փաստաբանութեան հետ գաղղիներէն ու տաճկներէն լեզուաց ալ քաջահմուտ է, գոհ կընէ՝ դատական որ և է խնդրոյ համար առ ինքն դիմող անձինքն:

Ե Է Ն Ի Չ Է Ր Ի Ք
ՊԱՅՄԱԿԱՆ ՎԷՊ
Թորոգմանալ
Ի Յ Ո Ւ Ն Ա Ր Է Ն Է
Երկու հատոր

Ընթերցողն Եէնիչէրեաց վրկարար ջնջման և բիւրաւոր զեղծմանց պատկերը պիտի տեսնէ ներկայ գրքիս մէջ, որ նըկարեալ է խիստ գեղեցիկ և ազդու վիպասանութեան գոյներով հմտալից և ականատես հեղինակէն:

Գինն է 30 դրչ:

ՀԵՏՎԻՃԻ ԵՐԳՈՒՄԸ
Ա. ԱՇԱՐ
ԹԱՐԳՄԱՆԵՅ Գ. ՄՍԵՐԵԱՆ
ՉՄԻՌՆԻԱ
Տպարան-Բեռն Տեղեան

Կը գտնուի Կ. Պօլիս Չագմագճըլար փողոց Գալաֆեան եղբարց գրատունը և Չիւրուհիա Տէտէեանց վաճառատունը ի գին 5 դահեկան:

Բողոքականաց դէմ Գալիամաճեան Տիգրան Էֆէնտի յօրինած չորրորդ տեսա-

րակն ալ հրատարակեցաւ այս օրերս, որ ինչպէս նաև առաջինք՝ կգտնուին մայրաքաղաքիս գրավաճառաց խանութները, ի գին 40 փարայ:

Կիւրոսի աղնիւ և սննդարար գինին՝ սրմարմին և արիւն դօրացնելու և ստամոքսի ոյժ տալու համար, շատ անգամ փորձուած և շատ օգուտներ տեսնուած է, 5 էն՝ մինչև 20 տարեկան, և Անգրիանուպօլսոյ աղնիւ և մաքուր 2 էն մինչև 10 տարեկան, և ուրիշ քանի մը տեսակ զուտ և մաքուր գինիներ և խաղողէ քաղուած զուտ և պատուական օղիներ և մանիշակէ զուտ և մաքուր շինուած պատուական օշարակ՝ որ մարդուս շատ օգտակար է, զմեռած շիշենօրով և չափաւոր գիներով կը ծախուի Կ. Պօլիս Թահմիզ փողոց թիւ 9 մաղաղան, և Բերա Պօմարչէի դիմաց Գ. Գըլըճեանի մաղաղան: ՕՐ արքայով չզմուռածներն՝ երախաւորեալ չեն: Կգտնուի նաև՝ չայէ քաջասած ընտիր օղի, և ձէթ՝ խիստ ընտիր տեսակէն:

PILULES HOLLOWAY
ԴԵՂԱՀԱՏՔ ՀՈՂՈՒՄԻԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատքը, նաև զղային տկարութեան, ուժաթափութեան և տիրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաքնութեանց հետքերը: Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ: Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կաղեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտոտութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական զիրքը կըգգենու:

ONGUENT HOLLOWAY
ՍՊԵՂԱՆԻ ՀՈՂՈՒՄԻԻ

Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պայտամական յատկութեանցը չհաւասարի բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունուոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չերիֆէնչէ), սրունից և ստեանց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլուանան. օգտակար է նաև հարբուխի, հազի, սրտի բարխման, մանաւանդ օգացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան: Իւր կաղզուորիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրածա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ:

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահճէ-Գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի:
Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոբթօր Հոլլուէի Ի Լոնտոն Օքքսֆորտ փողոց թիւ 555:

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՁԻ

- 1.—Փոռնիջ 2ՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի:
- 2.—Տարեկան բաժանորդագրին է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ՛ գաւառաց համար:
- 3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի:
- 4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ:
- 5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի առ մեն շայ քրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով:
- 6.—Մանուցման տողը 3 դրուչ է մէկ անգամի համար: Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար:
- 7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պօլիս Ալաճա-Համամ Խալիլ խան միջին յարկ թիւ 19:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԻ
Բիգա փաշա խան քիւ 3